

լոյ . եթէ քաջախոհից արանց և 'ի մէջ և յայլազ-
գեաց՝ մերկապարանոց կայցէ այս ամենայն , ով է
որ յաւակնոտ բերանով իշխէ արհամարհող լինել
այստիսւոյ աղին . և չերկնչիցի , չածիցէ ակն ,
չկայցէ պատկառ արդարադատն կշտամբանաց
հայրենասէր անձանց , և հոգւոյն հայրենեաց , և
բովանդակ մարդկան սեւիս , որում չիւր ինչ նող-
կայի քան զմարդ ազգութեաց և հայրենատեաց .
կարծիցէ նա ճողոպրել զանձն յերկնաւաք յա-
նիծիցն . « Վայ այնոցիկ գոչէ , որք ասիցեն ցհայր
» իւրեանց՝ թէ ընդէր ծնար զիս , և ցմայր՝ թէ ընդ
« էր երկնեցեր զիս » . և ոչ գիտէ զի հայրենիք
ծնող են և ծնողաց ծնողք , և Հայաստան աշ-
խարհ հայրենեաց հայրենիք են մեր , և առաջին
հանգիստարան անմահից և մահացուաց : Հրէշ ան-
հեղեղ քան զհայրենատեաց մարդ ուրեք երեւեալ
ոչ է . մերկ և կողոպուտ յարգարութենէ և յուղիղ
դատմանէ մտաց և յիրաւացի փառասիրութենէ .
ինքնակապ գերի մղար կարծեաց՝ որ զայն 'ի
դալուկն հարեալ՝ դալկահար տեսանէ և զամենայն
որ յազգին իւրում . բաժանեալ յիւրմէ արմատոյն ,
և ոչ յայլում պատուաստ , իբրու խուլ հող-
մալար յանփառունակ կայս անկեալ դանդաչէ .
յառաջ քան զմահ յիշատակ նորա թաղեալ է ,
և քաղցրխառն արտասուք հայրենեաց ոչ քաւեա-
ցեն երբէք զանուն նորա :

Իսկ հայրենասէրն , ո՞ առաքինի ունկնդիրք իմ ,
անկեղծ հայրենասէրն՝ յանմահութիւն ճակա-
տագրեալ է . որ ընդ մեծի Վիպագրին « Հանուրց
հիւսիսականաց վեհագոյն » ճանաչէ զաշխարհ
իւր . որ ընդ սքանչելոյն Կորեան « Երանելի և
» ցանկալի , ասէ , աշխարհս Հայոց » . որ ընդ
Գրիգորի Տղայոյ համարձակի աղաղակել , « Հայ
» եմ ճշմարիտ և աներկբայ » . նա և աստուածայ-
նոցն և ընկերութեան հրամանաց և անձին և հայրե-
նի փառաց՝ պատկառ կայ . զուարթագին ակամբ
հայի՝ ի պարծանս նախնեաց և 'ի յոյս ապագայիցն ,
և ջանիւ վաստակի յօգուտ նոցին . 'ի յաջողու-
թեան և յաղէտս ազգին՝ միօրինակ կանգուն կայ
սիրտ նորա : Յորչափ հանճար՝ հոգի է հայրենեաց ,
յոյս՝ սիրտ նորա և ջան և աւելն կենդանական ,
մխիթարեցի 'ի վերայ ազգին : Եթէ ընդ օտար
աստեղք սահեալ իցէ նժգեհութեամբ , աչք նո-
րա ստեպ գառնան յայն կողմն՝ ուստի արեգակն
եղանէ , և զողջոյն հայրենեացն հարցանէ տարա-
գէմ ուղեւորաց . . . Յերկիր անհարազատ հաս-
նիցէ նմա մեռանել , այլ յիշատակօք և սիրով ու-
նայ անդ առնուլ զքունն յաւիտենից՝ ուր ննջեն
զինն զհաղանց Հայկն և Տիգրան և Տրդատ ,
Գրիգորեանք և Ներսիսեանք , Սահակ , Մեսրոպ և
Մովսէս : . . Ո՛հ , աճիւն իսկ նշխարաց նորին՝ ար-
ծարծեալ հայրենի սիրոյն բոցով՝ թռչի որպէս
զՅակոբեոն և զՅովսէփայ յերկիրն աւետեաց ,
կամ որպէս զՍողոմոն 'ի գաշտս Սաղամոնայ ,
խաղաղել 'ի ձորն Հայոց , և 'ի խորհրդազգեաց
ստուերս հովանաւոր ծառոցն Արտազու : — Ոգին
հայրենի , հօրամոյն անձինք , յետագայ իմաստունք
նուիրական արտասուք պատուեն զքամբան նորա

և զյիշատակ՝ ցորչափ անուն ազգին լսիցի ընդ ա-
նունս ազանց երկրի . . .

Եւ ձեզ , ով որդիք Արամայ , յորոց բաբախէ
տակաւին 'ի սիրտս ազգասիրութեան և ընկերսի-
րութեան զարկ , որոց քաղցր է զհայրենասիրի ժա-
ռանգել յազգիդ զանուն . ճանապարհ մի դիւրին
կայ ձեզ 'ի փառս . անխոտոր նմանողութիւն պան-
ծալի արդասեաց հանճարոյ հարցն ձերոց . յան-
խոջ ժրութեան , 'ի նախատես զգուշութեան ,
'ի մտառու ուսումնասիրութեան , 'ի սրատես
իմացութիւնս հաշուոյ և վաճառականութեան ,
'ի ճարտար արուեստարկութեան , 'ի զուարթա-
միտ առատութեան յօգուտ ընկերաց , յանխար-
դախ աշարջութեան , յեռանդն տիրասէր , յան-
անխառն և յուղղատես ոգի կրօնասէր , 'ի ձեռն-
տողութիւն համաշխարհական . . . Հինաւորոյն
Ասիա սիրով զձեզ 'ի ծոց իւր գգուէ , Եւրոպէ
ընդ հանճար ձեր բարեյայտող սխրացեալ կայ . և
եթէ երբեք գէպ ժամանակ հանգիստացունել
զհանճարդ հայրենի առաջի ամենայն աշխարհի ,
այս է աւասիկ : Ոգին Հայաստանի հրաման տայ
ձեզ զգաստս և զուարթութիւնս լինել . և համօրէն
աղինք որ արդ նախանձընդգէմք 'ի յառաջագէմ
անդր նկրտին ընթանալ , հարկ իմն և ձեզ առնեն
նշանաւորս հանգիստանալ բարեմասնութեամբ
հանճարոյ . անհնար է նմին անտես մնալ 'եթէ դոյ
'ի ձեզ ջան : . . .

Եւ դուք , քաղցր անկալիք մեր , Մանկունք ջա-
նասէրք , վառեցարուք առաքինեացն օրինակաւ ,
զոր և աստէն անտիւնդծ տեսանէք 'ի գէմն և 'ի
սիրտ և յոգի վսեմական կաճառոյս , որ ընդ
բովանդակն Հայաստան յածեալ աչք մտայ՝
զսիրալիւր յուսոյն անկարկիս դառնայ արդ 'ի ձեզ
կառուցանել :

Բ Ա Ր Ո Յ Ա Վ Ա Ն

Սովորաբար մեր երկրէ ըսելով ոչ միայն մեր գե-
ղը կը հասկընանք , հապա նաև մեր քաղաքը , գա-
ւառը կամ տէրութիւնը : Բայց կրնայ ըլլալ որ
մէկը իր երկիրը սիրէ՝ առանց իր հայրենիք սիրե-
լու . կրնայ ըլլալ որ սիրէ ան նիւթական տեղն ու
բնակարանը՝ ուր որ աշխարհք եկեր ու մեծցեր է ,
առանց սիրելու ան իրաւունքներն ու պարտքերը
որով մարդուս հայրենիքը կը ձևանայ : Ամեն մարդ
երկիր մը ունի որ ի՞նչ երկրս կրնայ անուանել . բայց
որչափ մարդ կայ որ հայրենիք չունի . որչափ մարդ
ալ կայ որ կարծէ թէ ունի , և սակայն չունի : Եր-
կիր կրնայ ըլլալ որ աւելի պակաս գեղեցիկ ըլ-
լայ . իսկ հայրենիքը միշտ սիրելի է ան մարդուն՝
որ գիտէ թէ հայրենիք ունի :